ԿԱՊՈՒՅՏ ՍՈՐՈՒՔԸ

AMÉLIE NOTHOMB

BARBE BLEUE

ROMAN

ԱՄԵԼԻ ՆՈՏՈՄԲ

ԿԱՊՈՒՅՏ ՄՈՐՈՒՔԸ

ՎԵՊ

Թարգմանությունը ֆրանսերենից՝
Աշոտ Բլբուլյանի

ԵՐԵՎԱՆ
2023

ՀՏԴ 821.133.1(493)-31 Նոտոմբ
ԳՄԴ 84(4Բե)-44
Ն 927

Ն 927 Նոտոմբ Ամելի
Կապույտ մորուքը: Վեպ / Ա. Նոտոմբ.- Եր.: Newmag, 2023.- 148 էջ:

Վարձով տուն փնտրող Սատուրնինեն փարիզյան շքեղ բնակարանում ստիպված է ապրել տանտիրոջ հետ ու ընդունել նրա պայմանները. երբեք չմտնել արգելված սենյակ, ընթրել նրա հետ և դառնալ նրա սրտակիցը՝ վտանգելով սեփական կյանքը: Իսպանացի առեղծվածային այս ազնվականը հայտնի է նրանով, որ նրա նախկին ութ վարձակալուհիներն անհետացել են...

Իր ժամանակակից «Կապույտ մորուքը» վեպում Ամելի Նոտոմբը վերաշարադրում է Շառլ Պերոյի հայտնի հեքիաթը՝ այն հարստացնելով սուր երկխոսություններով, որոնց իսկական վարպետն է: Ամելին ստեղծում է երկու վառ կերպարներ, որոնք ներքաշվում են մահացու մենամարտի մեջ՝ պաշտպանելով սեփական արժեքներն ու գոյության իրավունքը: Վեպը մարդկանց հարաբերությունների սահմանների տարբեր կոնցեպտների շուրջ մտորում է՝ մահվան, սպանության, սիրո, բազմակնության թեմաներով:

ՀՏԴ 821.133.1(493)-31 Նոտոմբ
ԳՄԴ 84(4Բե)-44

ISBN 978-9939-967-05-9
Ամելի Նոտոմբ «Կապույտ մորուքը» © 2023, «Նյու Մեգ» ՍՊԸ
Barbe bleue © Éditions Albin Michel - Paris 2012

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել ALBIN MICHEL ընկերության հետ կնքած պայմանագրով:

1

Սատուրնինեն տեղ հասնելուն պես խորապես զարմացավ, որ շատ մարդ է եկել: Անշուշտ, կռահում էր, որ ինքը միակ հավակնորդը չէ, բայց ամենևին չէր սպասում, որ իրենից առաջ տասնհինգ հոգի կլինի հերթում:

«Այստեղ ամեն ինչ հոյակապ է: Մի՞թե իրական է այս ամենը, – մտածեց նա: – Վարձով տրվող այս սենյակը, ցավոք, չի հասնի ինձ: Երբեք»: Բայց որոշեց սպասել, քանի որ աշխատանքից բացակայելու թույլտվությունը ստացել էր կես օրվա համար: Տեղանքն էլ տրամադրում էր սպասելուն: Առաջին անգամ էր այդ առանձնատանը՝ Փարիզի 7-րդ թաղամասում: Ապշել էր՝ տեսնելով իրեն շրջապատող շքեղությունը, նայելով բարձր առաստաղին ու վայելելով վեհաշուք հանդարտությունը: Ընդ որում, սա ընդամենը նախասրահն էր:

Հայտարարության մեջ գրված էր. «Քառասուն քմ սենյակ՝ լոգարանով ու մեծ, կահավորված խոհանոցով»: Ամսվա վարձն էլ՝ 500 եվրո: Ամենայն հավանականությամբ, ինչ-որ սխալմունք կար: Սատուրնինեն բնակարան շատ էր փնտրել Փարիզում, եղել էր ամիսը 1000 եվրո վարձով, 25 քմ, խղճուկ, անլոգարան կացարաններում, որոնց համար կռիվ տվողներն էլ շատ էին: Իսկ հիմա այս հիասքանչ առաջարկի տակ ի՞նչ էր թաքնված:

Զննեց կողքիններին, ու պարզվեց, որ բոլորն էլ կին են: «Հետաքրքիր է,– մտածեց նա, – չգիտեի, որ սենյակ վարձելը զուտ կնոջ գործ է»: Բոլորն ակնհայտորեն նյարդայնանում էին, և Սատուրնինեն շատ լավ հասկանում էր նրանց. չէ՞ որ

ինքն էլ էր տենչում ձեռք բերել այդ սենյակը: Թեև ինչո՞ւ հենց իրեն պիտի ընտրեին և ոչ թե պատկառելի արտաքինով այն տիկնոջը կամ, ասենք, անթերի սանրվածքով այն գործարարուհուն:

Սատուրնինեից առաջ կանգնած կինն ուսումնասիրում էր նրան և կարծես կարդալով աղջկա մտքերը՝ արձագանքեց.

— Հենց Ձեզ էլ կհասնի:

— Ներեցեք:

— Եկածների մեջ Դուք ամենաերիտասարդն եք ու ամենալավիկը: Հենց Ձեզ էլ բաժին կընկնի բնակարանը:

Սատուրնինեն խոժոռվեց:

— Այդպես տգեղանում եք,– շարունակեց անծանոթուհին: – Առանձնասենյակ մտնելիս ավելի անկաշկանդ եղեք:

— Վերջացրե՛ք:

— Մի՛ բարկացեք: Մի՞թե չգիտեք՝ ով է տանտերը:

— Ո՛չ:

Կինը բազմանշանակ լռեց այն հույսով, որ աղջիկը հարցեր կտա: Բայց Սատուրնինեն պարզապես սպասում էր՝ քաջ գիտակցելով, որ կինն ամեն դեպքում կշարունակի պատմել: Շատ չսպասեց.

— Մենք այստեղ առաջինը չենք: Մեզնից առաջ ութ կին վարձել են այս սենյակը: Բոլորն էլ անհետացել են:

— Գուցե չեն հավանել:

— Դուք չընկալեցիք: Նույնիսկ չեն հասցրել կարծիք հայտնել. նրանց մասին հետո ոչ ոք ոչինչ չի լսել:

— Մահացե՞լ են:

— Ամենևին: Մահանալն անհետանալ չէ:

Կինն ակնհայտորեն բավարարված էր իր խոսքերի թողած տպավորությունից:

— Ուրեմն ինչո՞ւ եք եկել,– հարցրեց Սատուրնինեն: – Դուք է՞լ եք ուզում անհետանալ:

— Դժվար թե ինձ ընտրեն: Բայց գոնե կհանդիպեմ տանտիրոջ հետ, կտեսնեմ՝ ով է:

Սատուրնինեն չտվեց այն հարցը, որն ակնկալվում էր: Այդ բամբասկոտ կինը բարկացնում էր նրան: Ու շարունակում էր շաղակրատել.

— Դոն Էլեմիրիոն երբեք դուրս չի գալիս տնից: Ոչ ոք նրա լուսանկարը կամ դիմանկարը չի տեսել: Ուզում եմ տեսնել՝ ինչ տիպի տղամարդ է, որ այդքան կին ցնդում է նրա համար:

Սատուրնինեն փախչելու ցանկություն ունեցավ: Խորշում էր կանանց սիրահետող տղամարդկանցից: Ավա՜ղ, նա իր համար բնակարան փնտրելու ուժ չուներ այլևս: Ճնշվում էր, հենց մտածում էր, որ երեկոյան ստիպված վերադառնալու է Մարն-լա-Վալե: Ընկերուհու՝ Կորինի երկսենյականոց բնակարանում էր ապրում: Կորինն աշխատում էր Փարիզի Դիսնեյլենդում: Նա մեծ ուրախությամբ էր հյուրընկալել երիտասարդ բելգուհի Սատուրնինեին ու ոչ էլ գլխի էր ընկնում, որ խեղճ աղջկա շունչը կտրվում էր ամեն անգամ, երբ պառկում էր ծխախոտի հոտով ներծծված բազմոցին:

— Սեռին վերաբերող նախապայման կա՞ր հայտարարության մեջ,– հարցրեց Սատուրնինեն: – Այստեղ միայն կանայք են:

— Որևէ նախապայման չկա: Ձեզնից բացի՝ բոլորը գիտեն: Օտարերկրացի՞ եք:

Սատուրնինեն չէր ցանկանում ճշմարտությունն ասել, հոգնել էր մշտական արձագանքներից («Օ՜: Ես բելգիացի ընկեր

ունեմ, նա…»): Նա ոչ մեկի հետ ծանոթ չէր և ոչ էլ ցանկանում էր այդ կնոջ հետ բարեկամանալ, ուստի ասաց.

— Ղազախ եմ:

— Ինչ... ներեցեք:

— Ղազախստանից եմ եկել: Երևի գիտեք, որ ղազախներն աշխարհում ամենակատաղի մարտիկներն են: Երբ մենք ձանձրանում ենք, սկսում ենք մարդ սպանել:

Կինը բերանը փակեց ու փակեց:

Սատուրնինեն մտածելու ժամանակ ուներ: Ինչի՞ց պետք է վախենար: Շուտ սիրահարվող չէր, առավել ևս՝ կնամոլներին: Կանանց անհետացումը մութ պատմություն էր, սակայն Մարն-լա-Վալե վերադառնալն ավելի սարսափելի էր:

Սատուրնինեն նայեց տասնհինգ կանանց: Ակնհայտ էր, որ ոչ մեկին պետք չէր այդ բնակարանը, քանի որ բոլորն էլ հարուստ թաղամասերից էին: Նրանց սոսկ գրավել էր իսպանական ազգանունը, հատկապես ազնվական ծագումը: Սա զայրացնում էր Սատուրնինեին: Նրա համար նողկալի էր ֆրանսիացիների մղումը դեպի ազնվականները:

«Հանգստացի՛ր,– ինքն իրեն ասաց նա: – Գլխիցդ հանի՛ր դրանց բարբաջանքը: Այստեղ ընդամենը բնակարանի համար ես: Ու վերջ»:

2

Երկու ժամ անց քարտուղարը Սատուրնինեին ուղեկցեց չորացրած ծաղիկներով զարդարված ընդարձակ աշխատասենյակ:

Իր ձեռքը սեղմող տղամարդուն նայելիս աղջիկը միայն մի բան նկատեց. նա շատ ընկճված էր, հայացքը հանգած էր, ձայնը՝ տանջահար:

— Բարի օր, օրիո՛րդ: Դոն Էլեմիրիո Նիբալ ի Միլկար: Քառասունչորս տարեկան եմ:

— Սատուրնինե Պյուիսան: Քսանհինգ տարեկան եմ: Լուվրի դպրոցում պարապմունքներ եմ վարում. դասախոսի եմ փոխարինում:

Սատուրնինեն սա հպարտությամբ ասաց: Բելգուհու համար այդ տարիքում նման աշխատանք ունենալը, թեկուզ ժամանակավոր, մեծ հաջողություն էր:

— Սենյակը Ձերն է,– ասաց տղամարդը:

Սատուրնինեն շփոթված հարցրեց.

— Դուք բոլոր թեկնածուներին մերժեցիք, իսկ ինձ այդպես միանգամից ընդունո՞ւմ եք: Լուվրի դպրո՞ցը վստահություն ներշնչեց Ձեզ:

— Թող այդպես լինի,– անտարբեր պատասխանեց նա: – Հիմա ցույց կտամ Ձեր սենյակը:

Սատուրնինեն հետևեց նրան: Անցան բազմաթիվ պճնասրահներով ու վերջապես հասան մի սենյակ, որը հսկայական թվաց աղջկան: Սենյակի ոճը որքան շքեղ, նույնքան էլ անորոշ էր: Սենյակին կից լոգասենյակը նորոգված էր:

Սատուրնինեն երազել իսկ չէր կարող նման շքեղ բնակարանի մասին:

Այնուհետև դոն Էլեմիրիոն նրան տարավ խոհանոց, որը նույնպես ընդարձակ էր ու խիստ ժամանակակից ոճով էր կահավորված: Նա ցույց տվեց սառնարանը, որից միայն Սատուրնինեն էր օգտվելու:

— Չեմ կամենում իմանալ, թե ուրիշներն ինչ են ուտում,– բացատրեց դոն Էլեմիրիոն:

— Ուտեստը Դո՞ւք եք պատրաստում,– զարմացավ երիտասարդ կինը:

— Իհարկե: Խոհարարությունն արվեստ է և իշխանություն. չեմ էլ կարող պատկերացնել, որ կարող եմ ենթարկվել որևէ մեկին: Եթե ցանկանաք ընթրիքին ընկերակցել ինձ, հաճույքով կընդունեմ Ձեզ: Բայց հակառակը չի կարող լինել:

Վերջում դոն Էլեմիրիոն աղջկան ուղեկցեց սևամած մի դռան մոտ:

— Այս մութ սենյակում լուսանկարներ եմ երևակում: Դուռը բանալիով չեմ կողպում. վստահում եմ Ձեզ: Բնականաբար, մուտքն արգելված է: Եթե մտնեք այս սենյակ, անպայման կիմանամ: Եվ Ձեզ համար լավ չի լինի:

Սատուրնինեն լռեց:

— Մյուս բոլոր սենյակներով կարող եք հանգիստ անցնել: Հարցե՞ր:

— Պայմանագի՞ր ենք կնքելու:

— Այդ մասին կխոսեք քարտուղարիս հետ: Իլարիոն Գրիվելանը բարեհոգի անձ է:

— Ե՞րբ կարող եմ տեղափոխվել:

— Թեկուզ հենց հիմա:

— Այդ դեպքում գնամ Մարն-լա-Վալե՝ ընկերուհուս տնից իրերս վերցնելու:

— Վարորդս կարող է ուղեկցել Ձեզ, կկամենամ:

Սատուրնինեն առանց ձևականության ընդունեց առաջարկը, քանի որ հակառակ դեպքում պիտի էլեկտրագնացքով գնար ու գար:

3

— Ինձ հետ վա՞տ էր, — հարցրեց Կորինը:

— Ո՛չ, շատ լավ էր: Դրա համար մինչև մահ շնորհակալ եմ: Բայց չեմ կարող հավիտենապես չարաշահել քո հյուրընկալությունը, չէ՞:

— Քեզ համար մտահոգ եմ: Մի տեսակ մութ պատմություն է:

— Կորի՛ն, վաղուց ես ճանաչում ինձ. հեշտ հանձնվող չեմ: Երբ ուզես, հյուր եկ: Մետրոյի «Տուր Մոբուր» կայարանի մոտ է: Պայմանագիրը կարդացել եմ, կարող եմ նաև հյուրեր ընդունել:

— Իսկ եթե պատահաբար մտնես այդ սև սենյա՞կ:

— Ես, երբեք: Ի վերջո, թքած ունեմ նրա լուսանկարների վրա:

Bentley-ն շքամուտքի մոտ նրան էր սպասում: Վարորդը գնալ-գալու ճանապարհին ոչ մի բառ չխոսեց, մեքենան կանգնեցրեց առանձնատան ներքին բակում: Մթնշաղին շինությունն ավելի հեքիաթային թվաց Սատուրնինեին:

Իրերը տեղավորեց ներկառուցված պահարաններում, որոնք չափից ավելի տարողունակ թվացին: Ժամը ութին դուռը թակեցին:

— Բարի երեկո, օրիո՛րդ,– ողջունեց ներս մտած տղամարդը: – Ես Մելենն եմ՝ տան սպասավորը: Ո՞ր ժամին թույլ կտաք մաքրել Ձեր սենյակն ու լոգարանը:

— Այստեղ շատ մաքուր է:

— Բնականաբար, սակայն պարտավոր եմ ամեն օր մաքրել: Պարոնը Ձեզ հրավիրում է ընթրիքի: Եթե նրա առաջարկն ընդունեք, սենյակը կմաքրեմ Ձեր բացակայության ընթացքում:

— Լավ,– ի պատասխան նետեց Սատուրնինեն՝ շարժվելով դեպի խոհանոց:

Դոն Էլեմիրիոն խոհանոցում զննում էր սեղանին դրված ձվերը, որոնք կուտակել էր բուրգի պես: Հարցրեց՝ հավկիթ սիրո՞ւմ է արդյոք: Սատուրնինեն դրական պատասխան տվեց:

Դոն Էլեմիրիոն ձվածեղը պատրաստեց մեծագույն վարպետությամբ: Նրա սահուն, հղկված շարժումները շփոթեցրին Սատուրնինեին:

— Հենց այստեղ էլ ընթրենք, օրիո՛րդ, եթե դեմ չեք:

Խոհանոցի սեղանն ամբողջությամբ օրգանական ապակուց էր պատրաստված. հաճելի էր և՛ դիտելը, և՛ մոտը նստելը: Դոն Էլեմիրիոն նստեց բարձր աթոռակի վրա և Սատուրնինեին հրավիրեց սեղանի մոտ:

Նա լուռ ուտում էր, իսկ Սատուրնինեն ծածուկ զննում էր նրան: Ինչո՞ւ էր այս մարդուն հետապնդում կանանց գայթակղողի համբավը: Բարետես էր, ու վերջ: Հագուստը շատ սովորական էր, արտաքուստ ոչնչով աչքի չէր ընկնում: Որպես զրուցակից՝ զրո: Սատուրնինեն մեծ ցանկության դեպքում իսկ կդժվարանար նրա որևէ արժանիք առանձնացնել:

— Ինչո՞վ եք զբաղվում,– հարցրեց Սատուրնինեն:

— Ոչնչով:

— Լուսանկարելուց բացի, իհարկե:

Նա մի պահ վարանեց:

— Իհարկե: Բայց հազվադեպ եմ դրանով զբաղվում: Սպասում եմ ոգեշնչման, որը երբեմն է գալիս:

— Այդ դեպքում ամբողջ օրն ինչո՞վ եք զբաղվում:

Սատուրնինեն սպասում էր, որ նա կվրդովվի իր աննրբանկատությունից: Ամենևին:

— Ես իսպանացի եմ:

— Հարցս այդ մասին չէ:

— Դա իմ աշխատանքն է:

— Ո՞րն է Ձեր աշխատանքի իմաստը:

— Աշխարհի ոչ մի ազնվական չի կարող համեմատվել տոհմիկ իսպանացու հետ: Ես ազնվազարմ եմ ամբողջական դրույքով:

— Ասենք, այս երեկո ինչպե՞ս եք դրսևորելու Ձեր ազնվական ծագումը:

— Վերընթերցելու եմ ինկվիզիցիայի արխիվը: Հիասքանչ տեքստեր են: Ինչպե՞ս կարող էին փնովել այդ դատական ատյանը: Զարմանալի է:

— Գուցե այն պատճառով, որ նրանք տանջամահ էին անում մարդկանց:

— Սպանությունն ու խոշտանգումն ինկվիզիցիայից առաջ էլ կար: Այն առաջին հերթին դատական մարմին էր: Ամեն ոք արդար դատաստանի իրավունք ուներ իր մահապատժից առաջ:

— Արդարադատության ծաղր էր:

— Ի՞նչ եք ասում: Հարկ է նորից ու նորից կարդալ մեղադրանքները. լիակատար մետաֆիզիկա: Իրական առաջընթաց՝ նախորդած բարբարոսության համեմատ: Վհուկ լինելու մեղադրանքին նախկինում անմիջապես հետևում էր խարույկը: Մինչդեռ սուրբ ինկվիզիցիայի շնորհիվ կախարդների առջև բացվում էր արդար դատաստանի դուռը. նրանց կարող էին նաև արդարացնել:

— Շատերի՞ն են արդարացրել:

— Ոչ մեկին: